Funded by the European Union

Սոցիալական պաշտպանություն

Պարզեցված բյուջե - 2025

Սույն հրապարակումը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ, «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի, «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ի և «Ագորա Սենթրլ Յուրոփ» ՀԿ-ի (Չեխիա) հետ համագործակցաբար գործարկվող «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի շրջանակներում:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Հրապարակումից օգտվելիս պատշաճ հղումը պարտադիր է

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ԱՍՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության
ԺՎԲ	Ժողովրդագրական վիճակի բարելավում
ԼՂ	Լեռնային Ղարաբաղ
մլն	միլիոն
մլրդ	միլիարդ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր ակնարկ 4

Սոցիալական պաշտպանության բյուջեն 5

Սոցիալական պաշտպանության բյուջեի կշիռը պետական բյուջեում 7

Սոցիալական պաշտպանության բյուջետային ծրագրերը 8

Սոցիալական պաշտպանության բյուջեի կառուցվածքն ըստ ծրագրերի 10

2025 թվականի ակնկալվող արդյունքային ցուցանիշներ 11

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

2025 թվականի պետական բյուջեն հաստատվել է եկամուտների գծով 2,837.6 մլրդ դրամ, ծախսերի գծով 3,441.6 մլրդ դրամ և դեֆիցիտի գծով 604 մլրդ դրամ կամ համապատասխանաբար ՀՆԱ-ի 26, 31.5 և 5.5 տոկոսը:

Սոցիալական պաշտպանությանն ուղղված ծախսերը պետական բյուջեում ներկայացված են Սոցիալական պաշտպանության ծրագրերով, որոնք համակարգվում են ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ԱՍՀՆ) կողմից:

Ըստ ՀՀ կառավարության 2025 թվականի բյուջետային ուղերձ-բացատրագրի սոցիալական պաշտպանության հիմնական նպատակներն են երկրում աղքատության մակարդակի էական կրճատումը, ժողովրդագրական իրավիճակի բարելավումն ու Հայաստանի Հանրապետության բնակչության առանձին խմբերի համար սոցիալական երաշխիքների ապահովումը:

2025 թվականին սոցիալական պաշտպանության ոլորտին նախատեսվել է հատկացնել 905.6 մլրդ դրամ, ինչը կազմում է պետական բյուջեի ամբողջ ծախսերի 26.3 տոկոսը և ՀՆԱ-ի 8.3 տոկոսը: Նախորդ տարվա համեմատ սոցիալական պաշտպանության ոլորտի ֆինանսավորումն աճել է 6.2 տոկոսով:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՆ

- 2025 թվականին պետական բյուջեի ընդհանուր ծախսերում գերակայում են սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսերը:

- 2025 թվականին սոցիալական պաշտպանության ոլորտին նախատեսվել է ուղղել 905.6 մլրդ դրամ, որը կազմում է ընդհանուր բյուջետային ծախսերի 26.3 տոկոսը:

Սոցիալական պաշտպանության մասնաբաժինը 2025թ.-ի բյուջետային ծախսերում, տոկոս



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՆ

- 2025 թվականին ծրագրի ֆինանսավորումը կաճի 6.2 տոկոսով նախորդ տարվա համեմատ և կկազմի 905.6 մլրդ դրամ:
- Սոցիալական պաշտպանության ֆինանսավորումն աճող է: 2020-2025 թվականների ֆինանսավորման ծավալների միջին տարեկան աճը կկազմի 9.7 տոկոս: Արդյունքում 2025-ի մակարդակը 2020-ին կգերազանցի մոտ 1.7 անգամ կամ 357.3 մլրդ դրամով:
- Ամենաշատ աճը գրանցվել է 2024 թվականին՝ 20.8%, համեմատ 2023 թվականի: Աճի ցածր մակարդակ գրանցվել է 2022 թվականին՝ 1%, համեմատ 2021 թվականի:

Սոցիալական պաշտպանության ծրագրերի բյուջեն և դրա տարեկան աճը (%) 2020-2025թթ.



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿՇԻՌԸ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ

Սոցիալական պաշտպանության ծրագրերի բյուջեի կշիռը պետական բյուջեի ընդամենը ծախսերում, 2020-2025թթ., տոկոս



- 2025 թվականին սոցիալական պաշտպանության ծախսերի կշիռը պետական ծախսերում կկազմի 26.3 տոկոս, որը նախորդ տարվա համեմատությամբ ցածր է 2.5 տոկոսային կետով:

- Սոցիալական պաշտպանության ծախսերի կշիռը բյուջետային ծախսերում 2025-ին ցածր է նախորդող բոլոր հինգ տարիների համեմատությամբ: 2020-2025 թվականներին սոցիալական պաշտպանության բյուջե/բյուջետային ծախսեր հարաբերակցության միջին մակարդակը կազմել է 28.3 տոկոս:

- Սոցիալական պաշտպանության ծախսերի միջին տարեկան աճը զիջում է պետական բյուջեի համապատասխան ցուցանիշը: 2021-2025 թվականներին պետական բյուջեի ընդամենը ծախսերի միջին տարեկան աճը կազմել է 10.6 տոկոս՝ սոցիալական պաշտպանության բյուջեի 9.7 տոկոս մակարդակի պայմաններում:

Սոցիալական պաշտպանության ծրագրերի բյուջեի կշիռը ՀՆԱ-ում, 2020-2025թթ., տոկոս



- 2025 թվականին սոցիալական պաշտպանություն ծրագրի բյուջեն կկազմի ՀՆԱ-ի 8.3 տոկոսը, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 0.1 տոկոսային կետով:

- Սոցիալական պաշտպանության ծախսերի կշիռը ՀՆԱ-ում 2025-ին ցածր է նախորդող բոլոր հինգ տարիների համեմատությամբ: 2020-2025 թվականներին սոցիալական պաշտպանության ծախսերի ՀՆԱ-ում հարաբերակցության միջին մակարդակը կազմել է 8.2 տոկոս:

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

2025 թվականին կիրականցվի 17 ծրագիր:

Դասիչ	Ծրագիր	2024 մլն դրամ	2025 մլն դրամ	2025 տոկոս	2025/2024 տոկոս
1005	Պարգևավճարներ և պատվովճարներ	10.792.9	11,107.1	1.2	2.9
1011	Անապահով սոցիալական խմբերին աջակցություն և կյանքի դժվարին իրավիճակում սոցիալական խմբերին աջակցություն	24.002.3	23,410.9	3	-2.5
1015	Սոցիալական փաթեթների ապահովում	9.068.8	11,694.1	1.3	28.9
1032	Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց աջակցություն	3.863.9	4,860.7	0.5	25.8
1068	Ժողովրդագրական վիճակի բարելավում	66.661.5	80,087.6	9	20.1
1082	Սոցիալական աջակցություն անաշխատունակության դեպքում	22.834.5	24,976.8	3	9.4
1088	Զբաղվածության ծրագիր	1.440.0	1,730.1	0.2	20.4
1098	Բնակարանային ապահովում	8.008.7	12,006.8	1.3	49.9
1102	Կենսաթոշակային ապահովություն	519 .641.1	560,271.5	62	7.8
1117	Սոցիալական պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ	8.636.5	8,232.1	0.9	-4.7

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Աղյուսակի շարունակություն

Դասիչ	Ծրագիր	2024 մլն դրամ	2025 մլն դրամ	2025 տոկոս	2025/2024 տոկոս
1141	Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցություն	4.497.2	4,965.3	0.5	10.4
1145	Կանանց հիմնահարցեր, ընտանիքում բռնության և մարդկանց թրաֆիքինգի զոհերին աջակացություն	0	157.8	0.02	100
1153	Սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման ծրագիր	146.523	149.7	0.02	2.1
1160	Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառում	2.504.8	3,300.6	0.4	31.8
1184	Ավանդների և այլ փոխհատուցումներ	803.4	1,010.0	0.1	25.7
1205	Սոցիալական ապահովություն	108.381.0	122,676.5	14	13.2
1206	Սոցիալական պաշտպանության համակարգի բարեփոխումներ	603.7	0	0	-100
1225	Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն	60.631.2	35,000.0	4	-42.3

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ԸՍՏ ԾՐԱԳՐԵՐԻ

- Սոցիալական պաշտպանության ոլորտի ամենամեծ բյուջետային ծրագիրը կենսաթոշակային ապահովություն ծրագիրն է, որին կուղղվի բյուջետային հատկացումների 62 տոկոսը:

- Հաջորդում են սոցիալական ապահովություն և, ժողովրդագրական վիճակի բարելավում (ԺՎԲ) ծրագրերը՝ համապատասխանաբար 14 և 9 տոկոս կշիռներով:

- Ընդհանուր առմամբ, նշված ամենամեծ 3 ծրագրերն ապահովում են սոցիալական պաշտպանության բյուջեի 85 տոկոսը: Մնացած 15 տոկոսը ապահովում է այլ ծրագրերի միջոցով, ինչպիսիք են՝ անապահով սոցիալական խմբերին աջակցություն և կյանքի դժվարին իրավիճակում սոցիալական խմբերին աջակցություն, սոցիալական աջակցություն անաշխատունակության դեպքում, զբաղվածության, բնակարանային ապահովում, ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն ծրագրերը և այլ ծրագրեր



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

2025 ԹՎԱԿԱՆԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ ստացող ընտանիքների թիվ

51269

Սոցիալական բնակարանային ֆոնդում ներառված կառույցներում բնակվող ընտանիքների թիվ

870, որից ԼՂ ընտանիքներ՝ 726

Ժամանակավոր կացարաններում բնակվող փախստականների թիվ

508

ՀՀ-ում փախստական ճանաչված և ապաստան ստացած, բնակարանների վարձակալության ծախսերի փոխհատուցում ստացող ընտանիքների թիվ

38 ընտանիք, 6 ամիս, 60,000 դրամ

Դրամական աջակցություն ստացող (նվազագույն ամսական աշխատավարձի չափով) մանկատների շրջանավարտների թիվ

31

Շուրջօրյա խնամքի ծառայություններ ստացող անձանց թիվ

1340, որից ԼՂ-ից բռնի տեղահանված՝ 80

Տնային պայմաններում խնամքի ծառայություններ ստացող անձանց թիվ

1325, որից ԼՂ-ից բռնի տեղահանված՝ 100

Անօթևան և բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող զինծառայողների ընտանիքների թիվ

43 - զոհված զինծառայողների ընտանիքներ
100 - զինծառայողների ընտանիքներ

Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի շահառուների թիվ

67943

Երեխայի ծննդյան միանվագ նպաստների շահառուներ

37420

50,000 դրամ դրամական աջակցություն ստացող, ընտանիքում 3 և ավելի երեխա ունեցող ընտանիքների թիվ

45103

Բնակարանային ապահովության ծրագրով աջակցություն ստացող երեխաներ ունեցող ընտանիքների թիվ

3500

Մայրության նպաստ ստացող անձանց թիվ

38160

Լեռնային Ղարաբաղի առանձին շրջաններից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցություն ստացող անձանց թիվ

4167

Սահմանամերձ բնակավայրերում բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցություն ստացող անձանց թիվ

31

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

2025 ԹՎԱԿԱՆԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Աշխատանքային կենսաթոշակներ, կենսաթոշակառուների թիվ

504990

Սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ, կենսաթոշակառուների թիվ

40405

Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների զինվորական կենսաթոշակներ, կենսաթոշակառուների թիվ

1402

ՀՀ օրենքով նշանակված կենսաթոշակներ, կենսաթոշակառուների թիվ

873

Կուտակային հատկացումներ մասնակցի կենսաթոշակային հաշվին, մասնակիցների թիվ

510000

Ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստներ նպաստառուներ

113990

Անկանխիկ եղանակով վճարումներից կենսաթոշակառուներին հետվճարի տրամադրում, շահառուների թիվ և հետվճար

280000
6000 դրամ

ԼՂ-ից բռնի տեղահանվածներին սոցիալական աջակցության տրամադրում և բնակարանային ապահովության խնդրի լուծում, շահառուների թիվ

53880 և
4200

Ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների ծառայություններ, շահառուների թիվ

1500

Տեսողության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնում, շահառուների թիվ

28

2023 թ. ԼՂ-ից բռնի տեղահանվածանձանց համար կարճաժամկետ ուսուցման դասընթացի կազմակերպման և աշխատանքային փորձ ձեռք բերելու համար աջակցության տրամադրում, շահառուների թիվ

1000

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

B4C Budgets for Citizens
Բյուջեներ քաղաքացիների համար

«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիր
www.budgets.am